ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրենի պարտականությունները կատարող՝ ---------------------Ա. Գևորգյան

01 «09»---------------------2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մուշեղ Գալշոյանի անվան 148 ավագ դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

X ³ դասարան

**Մովսեսյան Կարինե**

դասղեկի ազգանունը, անունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

**Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները**

1.Ներածություն/դասարանի ընդհանուր բնութագիր/

Դասարանի  աշակերտների թիվը կազմում է 18 աշակերտ, որից աղջիկ 5, տղա 13:

2.Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

1.Էքսկուրսիաներ Մշակութային վայրեր/

2.Դասղեկի ժամ /յուրաքանչյուր ուրբաթ/

3.Պ/թ լույս ընծայում

4.Միջոցառումներ

5.Արշավներ

6. Կրթական միջոցառումներ Նախատեսում են աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել ստացած գիտելիքները գործնականում կիրառելու, ինքնուրույն մտածելու, որոշումներ ընդունելու և առաջացած խնդիրները լուծելու կարողություններ և հմտություններ: Անցկացնել զրույցներ ու քննարկումներ այնպիսի թեմաներով, որոնք կնպաստեն մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը, սեփական լեզվի, պատմության, ավանդույթների և ազգային այլ արժեքների կարևորությունը գիտացելուն:

3.1 Հայեցի դաստիարակություն.

Հոգևոր դաստրարակություն- զրույցներ անցկացնել բարոյական չափանիշների, համամարդկային արժեքների վերբերյալ: Ձևավորել անձ, որի սկզբունքները լինեն բարությունը, ազնվությունը, պատասխանատվությունը և հանդուրժողականությունը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ձևավորել և զարգացնել գեղագիտական ճաշակ, կազմակերպելով այցելություններ պատմամշակութային տարբեր հաստատություններ: Սովորեցնել տեսնել, գնահատել ու պահպանել գեղեցիկը:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Քննարկել սեփական պատմության էջերը, առաջ քաշելով ազգային հիմնախնդիրները, հասնել նրան, որ յուրաքանչյուրը գիտակցի իր դերը հայրենիքի պաշտպանության, տարածքային ամբողջականության պահպանման և երկրի զարգացման գործում:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Հատուկ ուշադրություն դարձնել ֆիզիկական դաստիարակությանը: Առաջնորդվել <<Առողջ մարմնում-առողջ հոգի>> կարգախոսով և աշակերտներին իրազեկել առողջ ապրելակերպի կանոնները:

3.5Աշխատանքային դաստիարակություն

Սահմանել հերթապահություն, հետևել դասասենյակի մաքրությանը, մասնակցել շաբաթօրյակներին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Հաճախակի անցկացնել զրույցներ բնապահպանության թեմայով, կազմակերպել էքսկուրսիաներ բնության գրկում, ուշադիր լինել կենդանիների նկատմամբ, կազմակերպել ծառատունկ և մաքուր պահել միջավայրը :

3.7 Դպրոց -ընտանիք կապը

Ծնողներին մասնակից դարձնել դասավանդմանը, դպրոցական կյանքին վերաբերող հարցերին և էքսկուրսիաների կազմակերպմանը:

**ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ (34 ժամ)**

**Սեպտեմբեր**

**1 շաբաթ-** Զրույց << Գիտելիքի օր >> թեմայով

**2 շաբաթ- Կարգապահական կանոններ, հաճախումներ**

**3 շաբաթ-** «Հայրենիքի, պետականության արժևորումը»:

**4 շաբաթ-**Անկախության օր

**5 շաբաթ -** Հայաստանի պատմամշակութային հուշարձանները

**Հոկտեմբեր**

**1 շաբաթ-** Ուսուցչի տոն/Թարգմանչաց տոն

**2 շաբաթ**- Էրեբունի-Երևան

**3 շաբաթ-** Հայաստանյան ոսկե աշունը:

Աշնանային արձակուրդներ՝ այցելություն մշակութային կրթօջախներ

**Նոյեմբեր—«Հայրենիք,ազգ,մայրենի լեզու»**

**1 շաբաթ-** « Մարդկային արատներ»

**2 շաբաթ**- Մեդիագրագիտության օրեր

**3 շաբաթ-** «Ես հարգում եմ քո կարծիքը»:

**4 շաբաթ** –«Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը»:

**Դեկտեմբեր**

**1 շաբաթ-  «Տարբեր սերունդների անխուսափելի բախումները»:**

**2 շաբաթ**- Բնական աղետներ

**3 շաբաթ-** Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:

**4 շաբաթ** –Ամանորյա միջոցառումներ

Հունվար-

**1 շաբաթ**- 2-րդ կիսամյակի անելիքների քննարկում:

**2 շաբաթ**-«Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան 65-ամյակ»:

**3 շաբաթ**- Հայոց բանակի օր

**Փետրվար**

**1 շաբաթ-  «Բարեգործությունը համամարդկային արժեք»:**

**2 շաբաթ**- Բարեկենդանից մինչև Սուրբ Զատիկ

**3 շաբաթ-** Գրքի տոն, Թումանյանական օրեր

**4 շաբաթ** -Մայրենիի օր

**Մարտ**

**1 շաբաթ-** «Գարունը մեր կյանքում»:

**2 շաբաթ**- «Ազգային տոներ»:

**3 շաբաթ-** «Մեկ օր առանց ինտերնետի»:

**4 շաբաթ** - «Աղբի տեսակավորման նշանակությունը»:

**Ապրիլ**

**1 շաբաթ- «Տիեզերքը և մենք»:**

**2 շաբաթ**- Մայրության գեղեցկության օր

**3 շաբաթ- «Նոր աշխարհակարգ»:**

**4 շաբաթ**–Հայոց ցեղասպանության հիշատակի օր

**Մայիս**

**1 շաբաթ-** «Ճակատագի՞ր թե սեփական բախտի տնօրինում»:

**2 շաբաթ**- **« Մայիսյան հերոսամարտերը»:**

**3 շաբաթ- Էքսկուրսիայի նախապատրաստում**

2-րդ կիսամյակի արդյունքների քննարկում: